


7268



4232

ԱԼ. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ

ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ

(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)



Թ Ի Յ Լ Ի Ս
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ
1891

870
ԱԼ. ՔԻՆՄԻՇԵԱՆՑ

Դա՛ւ 43 Կարգաբեր
բերա 15 անգամ շարժուալ
22/VI - 1909 թ. *Ա. Քինշ.*

ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ

(Արտատպւած «ՄՈՒՐՆ» ամսագրից)



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1891



ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ

Дозв. ценз. Тифлисъ. 7 Марта 1891, г.

Типогр. М. Д. Ротинианца, на Голов. пр. соб. д. № 41

Ամեն ժամանակներում, մարդկային ազգի զարգացման որոշ աստիճանի վերաջ գտնելիս, շատ բույսեր ունեցել են առանձին խորհրդաւոր նշանակութիւն, և մարդիկ նոցա իբրեւ սրբութիւն պաշտելիս են եղել: Որովհետեւ նախկին մարդուն չատուկ էր իւրաքանչիւր իրան շրջապատող առարկայ բացատրել իւր հասկացողութեան համաձայն, ալս պատճառով բույսերի խորհրդաւոր նշանակութիւնն և նոցա սրբազան մեծարանքը փոփոխուում էր համեմատ մարդու զարգացման աստիճանին: Յալտնի գիտնական Տէլլորն իւր «Կրթութեան ծագումն» անուն երկասիրութեան մէջ գուրս է բերած բույսերի պաշտօնի կամ մեծարանքի հետզհետէ զարգացման մի քանի աստիճանները: Նորա ասելով, մի քանի ազգեր կարծում են թէ ծառն ունի բանական էակի բոլոր որակութիւններն ու չատկութիւնները և հետեապէս կարող է ըստ իւր կամաց քնասել կամ պաշտպանել մարդուն. թէ նորա մէջ չար ոգիներ են չառաջացել և իբրեւ թէ ծառը կարող է լինել հանգիստ առնելու մի վալր, ուր հաճութեամբ իջնում է մի որ և է երկնային ոգի. ուստի և ծառերի չորջակալքը շատ չարմար տեղ էին համարւում աղօթարաններ շինելու և զոհեր մատուցանելու, ի պատիւ նոցա մէջ բնակող ոգիների:

Երկրագութեան և մեծարանաց զարգացման ալս վերջին աստիճանում միակերպ սրբազան էին համարւում

թէ առանձին առած ծառերը և թէ ամբողջ անտառները, ուր մարդիկ անխտիր կանգնեցնում էին հնուսն իրանց աղօթարանները:

Եթէ առանձին ծառերը կամ ամբողջ անտառը մարդու աչքում սրբազան էին համարում, ոչ պակաս պաշտելի էին նորա համար և ծաղիկները: Մարդս՝ պաշտելի Աստուծու ուշադրութեան արժանանալու կամ նորա ցասումը մեղմացնելու համար, նորան ծաղիկներ էր մատուցանում կամ զոհում էր նորան իւր աչքու կամ պարտիզի երեխալիքը, Յետագայ ժամանակներում մարդս, իւր զարգացման աւելի բարձր աստիճանի վերայ, ծաղիկներին տեղ է խորհրդաւոր նշանակութիւն և նոցանով հմայելով՝ զուշակել է իւր բաղդն ու վիճակը:

Ներկայ գրածքում մտադիր ենք համառօտակի չառաջ բերել ծաղիկների, ծառերի և առհասարակ անտառի խորհրդաւոր և սրբազան նշանակութիւնը, որ տեղի է ունեցել մարդկային ազգի զանազան ցեղերի աչքում՝ նոցա մի որոշ զարգացման աստիճանի վերայ եղած ժամանակ: Սորան կից առաջ կը բերենք հայ ազգի հեթանոսական շրջանից սկսած մինչև մեր ժամանակները բուսական թագաւորութեան տւած չարդանքը, ի հարկէ որքան մեղ կը ներեն այն կցկտուր և կարճ տեղեկութիւնները՝ որ ցրած են մեր հին և նոր գրականութեան մէջ, չը խորշելով և բանաւոր աւանդութիւններից, որ պատում են այժմ մեր ժողովրդի մէջ: Պարտք ենք համարում սակայն մեր ասածներին աւելացնել և այն՝ որ այս դէպքում ձեռնպահ պիտի մնանք մեր առաջ բերած փաստերին որ և է բացատրութիւն տալու, այլ պիտի բաւականանանք այդ փաստերն ընթերցողին իբրև տեղեկութիւնների ժողովածու ներկայացնելով: Խոստովանում ենք որ մեր ժողոված փաստերը շատ թերի են, մանաւանդ ազգային աւանդութիւնների վերաբերմամբ:

որովհետև սոցա ի մի ժողովելն և լոյս ընծայելն ազգին աւելի ծանօթ և ազգային մատենագրութեան աւելի հմուտ անձի գործ է,

Բոլոր ազգերից՝ արեւելեան ժողովուրդների աչքում ծաղիկները աւելի մեծ նշանակութիւն ունեն, աւելի պաշտելի են, արժանանալով նոցա առանձին ուշադրութեան: Մանաւանդ Պարսկաստանում և Հնդկաստանում իւրաքանչիւր ծաղիկ որ և է գաղափարի նշան է: Օրինակի համար՝ հնդկաց կրօնի մէջ զոհաւոր և հոտաւետ ծաղիկները ամենից շատ էին չարդում և արժանանում աստուածներին նւիրարբերելու. այն ինչ տերեւներ և հասարակ ծաղիկները զոհում էին կամ պատմական նշանաւոր ծաղիկները զոհում էին կամ պատմական նշանաւոր տերեւներն ու ծաղիկները կապ ունէին որ և է խորհրդաւոր առարկաների հետ: Այսպէս՝ Տրիմուրտի կամ երրորդութեան ներկայացուցիչ աստուծուն նւիրած էին երկու բույսեր, որ մեր առույտի (եօնջալի) նման երեք տերև ունին և նշանակում են երրորդութիւն: Կրիշնու և Վիշնու աստուածներին նւիրած էր մեր ունանի տեսակից մի բույս, որ ունի սպիտակ և անուշահոտ ծաղիկներ. վասն որոյ այդ բույսն առանձին պատւի արժանանալով՝ գործ էր դրում ամենայն օր զոհաբերութեան ժամանակ: Աւանդութեամբ Կրիշնուն Բրինդարունի կաթնալվաճառ աղջկանց հետ խաղացել է Կոտմէ և Կոշլաւ ծառի տակ, որի գնդաձև դեղին ծաղիկները չատկապէս նորան են նւիրած: Հնդկաստանում այդ ծաղիկները սրբազան են համարում, ուստի նոքա նկարած ու քանդակւած են շատ թանկագին իրերի և առարկաների վերայ: Աւանդութեամբ նոյն Պրիշնուն իւր սրնգի նւա-

գով չափշտակում էր կաթնալաճառ աղջկանց Բակուլա կոչւած ծառի տակ. ուստի այժմ այդ բոլորի դեղին և անուշահոտ ծաղիկները նւիրւած են նորան և Սիալին: Մի ծառ ևս՝ որ կոչւում է պէրէջատի, համարւում է խորհրդաւոր բաց ոչ սրբազան: Սորա ծաղիկները ծաղկում էին Ինդրալի պարտէզում, երկնքում: Կրիշնուի երկու ամուսինները վիճում էին թէ նոցանից որին է պատկանում այդ ծաղիկն որ գողացել է նոցա ամուսինն երկնալին պարտէզից. Այն որից, երբ Կրիշնուն գողացաւ այդ ծաղիկը, սա անխժեց և միաց երկրի վերայ իբրեւ բոլոր ծաղիկներից վատթարագոյնը. ուստի և այդ ծաղիկը չէ գործածւում զոհաբերութեանց ժամանակ:

Հնդկաց առասպելաբանութեան մէջ Կամադեւան, ինչպէս Կուպիդոնը, սիրոյ Աստուած է և Նոյնպէս Նկարւած է նետ ու աղեղով. Առասպելը պատմում է՝ որ նորա նետերը չըջապատւած են հինգ տեսակ նւիրական ծաղիկներով. Նոյն Կամադեւալին նւիրւած է պանդանգ բոյսն, որի ծաղկափոշին անուշահոտ է: Այդ ծաղկափոշին հաւաքում են և ի վաճառ հանում, որովհետեւ հարսանեաց օրն այդ ծաղկափոշին գործ է ածւում նորապաւկների վերայ թափելու համար:

Առհասարակ այն բոլոր ծաղիկներն որ իրանց գոյնով, գեղեցկութեամբ և հոտով աչքի են ընկնում, արեւելեան ազգերը նւիրաբերում են աստուածներին: Այս պատճառով Հնդկաստանում իւրաքանչիւր մի աղջակիսի ծաղիկ տաճարի դրանը կանդնած «սաթանիս» կոչւած ծաղկալաճառները առաջարկում են հաւատացեալներին, որ գնում են աստուածներին նւիրաբերելու համար: Իսկ այն վերոյիշեալ չատկութիւններ չունեցող ծաղիկներն առասպելական աւանդութիւնների մէջ սովորաբար վերաբերւում են կամ աստուածութեան հետ կապ ունեցող որ և է հանգամանքին կամ աւանդութիւնը աղջակիսներին տա-

լիս է որ և է խորհրդաւոր նմանութիւն այն աստուծու չատկանիչներին, որին այդ ծաղիկները նւիրւած են:

Հնդկաց և մանաւանդ եգիպտացոց առասպելաբանութեան մէջ մեծ նշանակութիւն ունէր չո-բո բոյսը, որ շատ նման է մեր հարսնամատին (նունուֆարին): Լուտասն եգիպտացոց ամենասիրելի ծաղիկն էր և նորանից նոքա կաղմում էին պսակներ և փնջեր: Այդ ծաղիկը, Նեղոս գետի աստուածը համարւելով, հին ժամանակներում նկարւում էր շատ չիշատակարանների վերայ, որ այժմ իսկ պահպանւած են: Լուտասը, ինչպէս և մեր հարսնամատը, ունի անթիւ նեղ և սպիտակ թերթեր. երբ արեւ մայր էր մտնում, թերթիկները ծածկում էին վարսանդի զլուխը, իսկ երբ արեւ ծագում էր—թերթիկները բացւում էին և ծաղիկն երևում էր ջրի երեսին: Մեր քերթողահայր Մովսէս Խորենացին իւր աշխարհագրութեան մէջ այդ ծաղիկի առասպելական չատկութեան մասին գրում է հետևեալը՝ «լինի վափրիկէ բանջար ինչ լուտաս անուն, զոր թէ ուտէ ոք՝ զհալոննիսն մուանայ»:

Լուտասը թէ եգիպտոսում և թէ Հնդկաստանում սրբազան էր համարւում և նշանակ էր պողոթնութեան: Ուստի Հօրուս աստուածը, որ ծագող արեգակի պատկերն էր համարւում, զարդարւած էր այդ բոյսի ծաղիկներից կամ կոկոմներից կաղմած պսակով, իսկ երբեմն էլ այդ աստուածը պատկերացնւում էր ջրից բարձրացող լուտասի ձևով:

Յունաստանի և Հռոմի առասպելների մէջ ծաղիկներին առանձնապէս մեծ նշանակութիւն չէ չատկացրած և աւանդութիւններից շատերը խօսում են միայն մի քանի բոյսերի ծագման մասին: Օրինակի համար՝ կարելի է չիշել պատանի Նարդիսին, որ իւր պատկերն աղբիւրի մէջ տեսնելով՝ սիրահարւել է նորա գեղեցկութեան. բայց իմանալով որ իւր սիրոյ այդ առարկան չի կարող ձեռք

բերել, լուսահատութիւնից ինքն իրան սպանում է: Պատանու արիւնը ծաղկի է փոխարկւել և այն ժամանակից կոչւում է «*հալի*», կրելով այն պատանու անունը: Յաւերժահարմարը նորա մարմինն աչրելու համար խարովկ են պատրաստում, բայց նորա դիակի փոխարէն՝ ածիւնի մէջ ծաղկի են գտնում:

Դափնին՝ Ապոլոնից հալածւած, վախենալով որ նորա ձեռքը չ'ընկնի, աղերսում է աստուածներին իրան պաշտպանել, ուստի փոխւում է «*հալի*» ծառի: Ապոլոնն աղ ծառի տերներէից պսակ է դնում իւր գլխին և հրամայում է աղ ծառն իրան նւիրել: Այս պատճառով Ապոլոնի տօնախմբութիւններին, որ տեղի էին ունենում ինքը տարին մի անգամ, դափնի էին գործ ածում:

Ադոնիս՝ Աստղիկի սիրեկանը, որսի ժամանակ վարազից վիրաւորւած մեռնում է: Աւանդութիւնն ասում է՝ որ երբ Աստղիկն իւր սիրելի մահաւան պատճառով սաստիկ վշտացած արտասուում է նորա դիակի վերայ, Ադոնիսի արիւնը վարդի է փոխւում, իսկ դիցունու արտասունքն «*հալի*» ծաղկի, որ հալերէն կոչւում է վարդակակալ:

Ի պատիւ Գէմէտրէ դիցունուն տրւած սրբազան հանդէսներում, աթէնացի տիկիները զարդարում էին իրանց անկողինը Գոտեաց «*հալի*» կոչւած բոյսի տերեւներով, որպէս զի աղպիսով հեռացնեն իրանցից դալթակղեցուցիչ մտքերը: Սոյն բոյսն այն հիման վերայ լատիներէն կոչւում է *virex agnus castus*, որ նշանակում է ողջախոհ գառն: Հին բժիշկները գործ էին ածում աղ բոյսը իբրև անարատութիւն պահպանելու մի միջոց ¹⁾:

1) Քալանթարեանի Հին բժշկաբանում, տպւած Նոր-Նախընթանում 1793 թ., այս բոյսի մասին ասւած է՝ «*սերմն և տերեւն նորին է գեղ ընդդէմ ցաւոյն վաւաշտութեան*»:

Զհուր՝ որ Արաբիայում բուսնող մի ծառից ծորող անուշահոտ և լիզահամ խէժ է, ըստ աւանդութեան կիպրոսի թագաւոր Կիւարոսի դուստր Միւռաի արտասուքն է: Որովհետև աղ աղջիկը, պատժւելով իւր հօրը չափազանց սիրելուն համար, փոքր թփի փոխակց:

Շատ տեսակ աւանդութիւններ կան նաև ծառերի մասին: Հին աղգերի առասպելների մէջ անխտիր կրկնւում է որ եղել են ասանձին չափութիւններ ունեցող ծառեր որ պաշտպանւում են օձից: Նա ով կը խմէր աղպիսի ծառերի պողի հիւթը, երբէք չէր մեռնիլ: Մանաւանդ սրբազան էր համարւում թէ «*հալի*» ծառն և թէ «*հալի*», որովհետև այս վերջինի սաղարթը ձմեռն անգամ չէ թափւում: Նոճին ընդհանրապէս մեծարւում էր Պարսկաստանում, իսկ Ամերիկայի հնդիկներն աղ ծառը սրբազան համարելով՝ կախում են նորա զանազան նւիրարեւութիւններ: Յունաստանում նոճիները համարւում էին էթէոկլի դստերը, որոց դիցունին արհամարհում էր, որովհետև զեղեցկութեամբ նոքա մրցում էին իրանց մօր հետ:

Միջին Նոյնպէս սրբազան բոյս էր. նա Արէս պատերազմական Աստուծու նշանակն էր. վերջը գործ էր դրւում Աֆրոդիտէի պսակի մէջ, երբ աղ դիցունին ծովից դուրս գալով, սա տիրաններից հալածւած՝ թագ կացաւ մրտենեաց մէջ: Արիւնլքում մինչև այժմ աղ բոյսը սրբազան է համարւում. հրէաները մինչև օրս նորան գործ են ածում տապանակի տօնին, իսկ արաբացիք նորան համարում են մէկը այն երեք առարկաներից որ իբր Ազամը դուրս է բերել զրախտից:

Հիւսիսային Եւրոպայի աղգերի առասպելաբանութեան մէջ «*հալի*» տիեզերական ծառ էր. Գերմանիայում «*հալի*» կիւրակի օրւան նւիրւած ծառ էր համարւում. իսկ Բելգիոյ «*հալի*» (եղեինը) սրբազան ծառեր էին աղ երկրի շատ աղգերի համար: Սուրբ Մարտինը փրան-

սխալում հեթանոսական մեհեանները տապալելիս՝ ձեռք չը տուա թեղօշի անտառներին:

Ձիթենի գետ մարդկութեան սկզբնաւորութիւնից չալտնի է և նորա գեղեցկութիւնը չաճախ լիչւում է Ս. գրոց մէջ: Ձիթենին անտարակաւ թէ քրիստոնէից և թէ հրէից մէջ սրբազան լիչատակներ է լարուցանում, որովհետեւ այդ պատմական բոլոր կապւած է Քրիստոսի երկրաւոր կեանքի հետ. ուստի և ձիթենին մեծ պատիւ է վայելում դոցա աչքում ևս հաւասարապէս:

Վերջապէս սրբազան տօների ժամանակ աստուածներին զանազան պտուղներ էին նւիրում, ինչպէս Բաքոսին՝ գինի և մինչև անգամ պտուղներ և ծաղիկներ:

Այժմ դառնանք մեր աղդալին աջն աւանդութիւններին որ վերաբերում են մեր աղգի հեթանոսական ժամանակ բոլորին ցոյց տւած չարգանքներին:

Հալոց հեթանոսութեան ժամանակ, երբ Բագրեանդայ դաշտում կտտարւում էր Նաւասարդի տօնը, անշուշտ այդ տօնի հանդէսների ժամանակ բուսական թագաւորութեան ներկայացուցիչները մեծ ծառայութիւն էին մատուցանում հանդիսակատարներին: Աղդտեղ Բագաւան կամ Գիցաւան կոչւած աւանդում կանգնած էր Ամենաբեղ աստուծո՛ւ արձանը, որ շատ սիրելի և պաշտելի էր Հալաստանում: Նա համարւում էր պտուղների խնամակալ և տարին մի անգամ՝ Հալաստանում բերքերի հասունանալու ժամանակ, հաւաքւում էր և հայ հեթանոս ժողովուրդը, աշխարհախումբ մի տօն էր կատարում նաւասարդ ամսի մէկից մինչև վեցը. և որովհետեւ Ամենաբեղ աստուծո՛ւ տօնը տարեգլխին էր ընկնում, ուստի և այդ տօնն անւա-

նում էին Ամանոր, որ նշանակում է տարին նորոգող: Այդ տօներին հեթանոս հայ ազգայանը նւիրում էր իւր պաշտելի Աստուծուն իւր քրտանց աշխատութեան պտուղները, հայցելով նորա հովանաւորութիւնը:

Բացի սորանից պատմագիրները լիչատակում են որ Անահտայ տօնին Հալերը՝ այդ դիցունուն պատելու և մեծարելու համար, ի միջի ալոց ընծալում էին և բոլսեր: Այսպէս, Ագաթանգեղոսի ասելով՝ Տրդատ թագաւորը հրամայեց Գրիգորին (Ղուսաւորչին) մատուցանել Անահտայ պատկերին ծաղկեայ պսակ և ծառերի թաւ ոստեր: Բայց թէ այդ պսակը ո՞ր ծաղիկներից էր կաղմւած, կամ թէ ի՞նչ տեսակ բոլսերի թաւ ոստերից էր հիւսւած՝ այդ չէ լիչատակում պատմագիրը: Բայց պատմական լիչատակարաններից օգուտ քաղելով, կարող ենք հետևեալ բացատրութիւնը տալ աջն բոլսերի ծաղիկների մասին:

Անահտայ ոսկէ արձանը կանգնած էր Մեծ և Փոքր Հալքի մէջ, Սկեղեաց դաւառի Նրիդայ աւանդում, Գալլ գետի մօտ: Գարեգին եպիսկոպոս Սրուանձատեանցը կարծում է որ այդ տեղը պէտք է լինի այժմեան Սատաղ գիւղը որ իրաւ մինչև այժմ գտնւում են հնութեան լիչատակներ: Սատաղ գիւղը կանգնած է Աղ-դաղ կամ Սպիտակ լեռան վերայ, ոչ հեռու Նրդնկալից, մի աշնայիսի տեղում, որ վաղէկ այդ դիցունու մեհենին: Այստեղից բացւում են երկու մեծ հովիտներ՝ մէկը դէպի Փոքր՝ միւսը դէպի Մեծ Հալք: Այնտեղ ի ցոյց երկու կողմերի բնակիչների պէտք է ընէր կանգնած Անահտայ ոսկէ արձանը: Եթէ այդ հեթանոսութիւնը ճիշդ է, ուրեմն Անահտայ տաճարը մի աշնայիսի տեղումն էր գտնւում, ուր Հալաստանի միջին և բլրալիս բուսաբերութեան տեսակները կարող էին լինել, որոնց մէջ գտնւում են բազմատեսակ ծաղիկներ ու բարձրուղեշ ծառեր: «Աղբերաց չրթներէն կը քաղենք շուշան ու դիներբուկն, լեռան կողերէն գաբն ու խաւարծիր»,

1) «Թորոս Աղբաբ», մասն երկերորդ, երես 45:

ասում է Գարեգին եպիսկոպոսը Նոյն երկասիրութեան մէջ: Մեր նախնիքն էլ իրանց դիցունուն պաշտելու և մեծարելու համար Սատաղ գիւղի մօտ և շուրջը կարող էին գտնել առատութեամբ վարդ ու հարսնամատ, դեղին անթառամ, աղբերաց արիւն, նարդիղ, մանուշակ, պէս պէս շուշաններ, գինեբուսկն, վառվռուկ, հոշոշ, մեծածուծ, եղածաղիկներ և այլն, որոնցից կարելի կը լինէր հիւսել գեղեցիկ պուկներ: Իսկ ծառերից՝ կան կաղամախիի, թեղօշի, հացենիի, աղկիի և ալաթահրի անտառներ: Ուրեմն մեր նախնիք Անահտին վառաքաններու և նորահովանաւորութիւնը հաղցելու համար կարող էին ալ ծառերի թաւ ոտները նւիրել իրանց դիցունուն:

Բացի դորանից մեր նախնիքն ունէին և սրբազան պրակներ և անտառներ, որոց մասին Մ. Խորենացին չի շուսէ, ասելով թէ «զԱնուշաւան որ Սօս անուանէին՝ քանզի ձօնեալ էր ըստ պաշտմանց ի սօսիոն Արամանեկալ որ Վրմաւիր, զորոց զսաղարթունցն սօսաւիւն ըստ հանդարտ կամ սաստիկ շնչելոյ օգոյն և եթ ոստոց շարժումն, սովորեցան ի հմալս աշխարհիս հաւկաղանց և սլս բազում ժամանակս»: 1) Սորանից երևում է որ «օ» ծառն և անտառը սրբազան էին համարուում և մեծարուում էին մեր նախնեաց կողմից իբրև իրանց բազդի կամ վիճակի մասին կատարելու չարմար վարեր:

Հեթանոս հաչն պաշտում էր Նոյնպէս բարտի ծառը, որովհետև Ներսէս Շնորհալին «Ընդհանրական» մէջ 2), ուղղելով իւր խօսքը Արևորդիներին, ասում է «և զբարտի ծառն մի աւելի պաշտէք քան զուրին և զկաղամախին և զայլս ի ծառաց, քանզի ալ ծառ, որ բարտի անուանի

1) Մ. Խորենացի, գիրք Ա, գլ. Ի:

2) Ընդհանրական Ն. Շնորհալուոյ, յազազս Արևորդացն գարձի:

ի կռապաշտութեան ժամանակին ի պաշտօն առեալ էր ճոցա լորս և դեք մոռնէին և ի մարդկանէ երկրպագութիւն ընդունէին»:

Ծաղիկներն ունէին Նոյնպէս իրանց աստուածը. ալ էր հօրո-մօրո- գեղեցիկ սպիտակ ծաղիկն, որ իրան հետ բերում էր գարունը՝ հեթանոս հաչին ձմեռալ զժնդակ ու տաղտկալի անգործութիւնից սթափեցնող տարւան ալդ պանծալի եղանակը: Եւ ինչպէս չը պաշտէր հեթանոս հաչն ալդ դարձանաբեր ծաղիկն, ապրելով Հաչատանի պէս սառը և ձիւնապատ երկրում: Մի ոտանաւորի մէջ այսպէս է գիմաւորում բանաստեղծը ալդ ծաղիկների դիցունուն 1).

Ես հօրութիւկ-մօրութիւկ

Դրախտի հիւսած նարօտիկ,

Նախշուն սիրուն խառտութիւկ,

Կանաչ դաշտաց դիցունիկ:

Ես հօրութիւկ-գարնան դիք

Ձեռումս դրախտի բանալիք,

Դրախտի դռներ բաց արի՛

Գարուն տամ ձեր աշխարհի և ալն:

Հեթանոս հաչ ժողովուրդն՝ իւր գարնան դիցունուն պաշտելուց զատ, սրբազան և նւիրական էր համարում և ուրիշ ծաղիկներ և խոտեր: Այսպէս Մովսէս Խորենացու բերած գուսանոց երգերի ալս հատուածը թէ, «ալ և ասեն, տենչալ Սաթիւնիկ տիկին տենչանս՝ դարտախուր խաւարտ և զտեց խաւարծի ի բարձիցն Արգաւանալ» 2), որ թէև մի քանի բառերի բուն նշանակութիւնը չիմանալու պատ-

1) Հօրութիւկ-մօրութիւկ, գարուն Հայոց աշխարհի Սամուէլ Գիւլ-գագեանց, Մեղու Հայաստանի N 35, 1884 թ.:

2) Մ. Խորենացի, գիրք Ա, գլ. Լ.

ճառով, բոլոր թարգմանիչներից ալլապէս է բացատրւած, սակայն ալդ հատւածի մէջ մի քանի չափերի բոյսերի անուններ են լուսւմ, որ իւր ժամանակին Սաթինիկի ալրւած ու դառնացած սրտին սպեղանի պէտք է լինէին: Ալանաց նազելի Սաթինիկն՝ Արտաւազդի բարք ու վարքից դառնացած՝ իւր ընտանեկան կեանքի համար, սաստիկ ցանկանում էր Արգաւանայ գողից ստանալ՝ աբա-իւր, խաւարք և խաւարծիւ բոյսերի նորածիլ տերեւները: Բայց թէ ինչ նշանակութիւն ունէին ալդ բոյսերն այն ժամանակ և ինչ խորհրդով էին գուսանաց երգերում դրօս երգւում, անկարելի է առ ալժամ այս հարցերին բաւարար մեկնութիւն տալ ¹⁾:

II

Վրաց և մեր ուրիշ զրացի ազգերի մէջ սրբազան ծառերի և անտառների մեծարանքը նոյնպէս շատ էր տարածւած: Աբխազները, չէրքէզները, մինգրէլները չափոնի տեղերում ունէին իրանց սրբազան վայրերն, ուր զոհաբերութիւն էին անում, պահպանելով ալդ վայրերը մեծ պատուով: 1889 թ. Գիննիկ ճանապարհորդը զարմաց-

¹⁾ Պ. Նիքեմ Դաւթեանը, «Արձագանք» 1886 թ. № 39, հիմնելով Հայոց լեզուի մի քանի արմատական բառերի և քերականական յայտնի կանոնների վերայ, փորձում է այդ հատւածին հետեւել բացատրութիւնը տալ՝ «Սաթինիկ տիկէնը սաստիկ ցանկանում էր փայտայել Արգաւանայ արաքուստ սամրապատ արտախուրը և նորա թաւշեայ բարձերի փունջը»: Սակայն հանգուցեալ պրոֆէսոր Ք. Պատկանեան իւր «Материалы для Армянского Словаря» (Հայ բառարանի համար նիւթեր) մէջ, յիշեալ բառերը՝ արտախուր, խաւարտ, խաւարծի՝ համարում է բոյսեր և սոցանից արտախուրը ենթադրում է պարսից դարգէի վարը, որ պարտղի խոտ է դեղին ծաղիով և անուշ հոտով:

մամբ տեսել է Վերին Օսէթիայի Ստուր Դիգորի առաւել մօտ մի փոքր տարածութեան վերայ մի ալդալիսի սրբազան անտառ, մինչդեռ շրջակայքը ներկայացնում էր սոսկ մերկութիւն: Ալդ անտառի ծառերը՝ Դիգորեցւոց օրէնքով, ոչ ոք իրաւունք ունէր կտրել. ծառի չորացած ճիւղերն անգամ հասարակ մահկանացուն իրաւունք չունէր վերցնել. որովհետեւ այն պատկանում էր հոգևորական անձանց՝ քահանային կամ եկեղեցւոյ միաբաններին ¹⁾:

Աւանդութիւնն ասում է որ Ս. Նունէն երբ գալիս է Մցխէթ և նորա աղօթքներով Աստուած կործանում է Արամազդայ արձանը, այն ժամանակ նա գնում է ալդ քաղաքի արեւելեան կողմով դէպի մի լեռնային վայր, ուր հին ժամանակում եղել է մի բերդ և քաղաք: Այստեղ գտել է մի գեղեցիկ բարձր և բազմոստ ծառ, որ կոչւում էր Բրէնջի — փշնի ծառ: Այս ծառի տակ երբեմն հանգչում է եղել Բարթամ թագաւորը և ալստեղ Ս. Նունէն աղօթում է վեց օր շարունակ ²⁾:

Թագաւորական ալդիւմ Ս. Նունէն երազում տեսած լուսաճաճանչ երիտասարդի որոշմամբ վերցնում է մալրերի սուերում բուսնող այն ծառի տակից հող և տալիս է իւր ամուլ տանտէրերին ուտելու: Այն ժամանակ նոցա զաւակ է շնորհւել:

Քրիստոնէութեան նոր մտած ժամանակ, երբ մարդիկ դեռ ևս բոլորովին զերծ չէին կռապաշտութեան ազդեցութիւնից և դարձեալ հակումն ունէին դէպի նախնի խորհրդաւոր աւանդութիւնները, նոքա ամենապարզ փաստերն անգամ սովոր էին բացատրելու հեթանոսական հոգւով: Այսպէս երբ Մցխէթի տաճարը շինւեց և նորա

¹⁾ Յիշատակարան Կայսերական Ռուսաց աշխարհագրական Ընկերութեան Կովկասու բաժնի, գիրք XIV, գրքոյկ առաջին:

²⁾ Բրոսսէ, «Պատմութիւն վրաց»:

օժման համար հրաւիրեց Յովհաննէս եպիսկոպոսը, աւանդութիւնն ասում է, որ սրբազանն ուշադրութիւն է դարձրել մի գեղեցիկ հոտաւէտ ծառի վերայ, որ կանգնած է եղել մի բարձր և անմատչելի ժառի գլխին: Սա հրաշագործ ծառ էր. և թէ նետով վիրաւորւած մի կենդանի ուտէր նորա տերևները կամ սերմերը, բժշկւում էր, մինչև անգամ եթէ վիրաւորւած լինէր կենդանու ամենավտանգաւոր տեղը: Արովհետև հեթանոսներին զարմացնում էր այս հանգամանքը, ուստի նոքա մատնացոյց են արել այս ծառը Յովհաննէս եպիսկոպոսին: Եպիսկոպոսը հրամայել է կտրել ծառը և նորանից խաչ չինել: Երբ այս հրամանը կատարւում է և տասը տասնեակ մարդով բերւում է Մցխէթ, այդ ծառը, չը նայելով ձմեռալին ժամանակին, կանաչում է: Մարտի 25-ին կտրւում են ծառը, բայց նա իւր զաւարութիւնը պահպանում է 37 օր, աւսինքն մինչև մայիսի 1-ը, երբ նորանից խաչ են չինում: Այս խաչը շատ հրաշքներ էր գործում, ասում է աւանդութիւնը:

Նոյնպիսի հնագույն առասպելական աւանդութիւններին պէտք է վերաբերել Լիբանանու հայ ծառի մասին եղած հետևեալ պատմութիւնը, որ պէտք է մի ճգնաւորի հնարած համարել:

«Երբ Ադամի որդին Սեթը, մեռնող հօր պատուէրով, գնում է դրախտից ողորմութեան հողը բերելու համար՝ այդ փառահեղ պարտիզի զոհերը բացւում են հրեշտակի ձեռքով որ թույլ չէ տւել նորան անտեղ ներս մտնելու. նա տեսնում է Լիբանանու մալր ծառը՝ դէպի երկինք ուղղած ոստերով: Ծառը կարծես ցոյց էր տալիս այն մեծ տարաբախտութիւնը, որին ենթարկւեց Ադամը մեղանչելուց. նա չուներ կենդանութիւն՝ տերևաթափ էր, բայց կենդանութեան չուս էր տալիս, որովհետև ծառի զազաթին նստած էր փալտն զգեստով մի մանուկ՝ չուսոց նշան բոլոր ապագայ սերնդոց համար»:

Այս առասպելախառն գրույցը ցոյց է տալիս թէ հին ժամանակներում ինչ մեծ լարգ և պատիւ էր վաշելում Լիբանանու մալրին, որից կառուցւել է Սիօնի տաճարը: Նոյն ժամանակին է վերաբերւում խորհրդաւոր պատմութիւնը Խնձորի մասին: Այդ պողի մասին առասպելներ կալին ամենայն ժամանակներում և ամեն ազգերի մէջ: Յունաստանի առասպելական Աֆրոդիտէն և Ս. Գրոց Եւան պատկերանում են մեզ այդ պտուղը ձեռքներին: Մի առասպելի մէջ խնձորի պաշտպան է հանդիսանում օձը, միւսի մէջ՝ վիշապը: Բոլոր արարական առակները վերջանում են երկնից իջնող երեք խնձորով: Ողիսեսն այդ պտուղը ձեռք բերելու համար մտնում է Ալկինոյի պարտէզը: Եղգալի մէջ (Նախին հիւսիսային գերմանական ժողովրդոց զիցաբանութեան ժողովածուն) ասում է որ Խզունան պահապան է խնձորի, որ դիք երկրասարդանալու համար ուտում են: Ագրապը՝ մահաւան հրեշտակը, իւր ներիրակութիւնը կատարում է խնձորը քթի տակին պահելով: Հիւսիսային ազգերի առասպելաբանութեան մէջ՝ խնձոր ուտելուց քիթն երկարում է և իբր չեւոյ իւր նախկին չափն է ստանում միայն տանձի օգնութեամբ: Գարեգին եպիսկոպոս Սրբանձտեանցի ժողոված առակների մէջ կալ մի առակ որ պատմում է թէ թագաւորի աղջկին իւր նաժիշաներով էլ են դառնում մի մեծ խնձոր ուտելուց և ապա նորից իրանց նախկին կերպարանքն են ստանում մի ալ, բայց աւելի փոքր չափով, խնձոր ճաշակելով ¹⁾: Նոյն հեղինակը Տիգրիս գետի ափունքները այցելելու միջոցին լսում է հետևեալ աւանդութիւնը խնձորի մասին. «Ամեն տարի, Համբարձման

¹⁾ «Թիֆլիսու Գունիա-Վեօգրիկոյ» Ժամով. Լոտով, Երես 225, Կ. Պոլիս. 1884 թ.

տօնին, առաւօտ, անմահութեան խնձոր մի հրեշտակներէն կը դուրս ալս ական ջրի մէջ, ուր ամենէն կանուխ հասնողն միայն կը տեսնէ. բայց երբ ձեռն կը կարկառէ առնելու, խնձորն ալ ևս չերևիր»:

Սակաւն ամենից նշանաւորն է անուածաղիկը (պասսիֆլորան) որ կրօնաւորների երեակալութեամբ պարունակում է իւր մէջ Քրիստոսի չարչարանաց ժամանակ գործ դրած բոլոր գործիքների նման մասեր՝ խարաղան, մուրճ, բևեռներ, փշեպոսակ, գեղարդ, մինչև անգամ տասն առաքեալներ բացի մատենից Յուդայից և ուրացող Պետրոսից: Ռուսաստանի հարաւային նահանգներից մէկում այդ ծաղկի ծաղման մասին հետեւեալ աւանդութիւնը կալ.

«Աւագ շարաթ օր իւղաբեր կանաչք գնում են եղել դառնապէս ողբալով: Սոցա պատահում է մի հեթանոս կին և հարցնում՝

— Բ՛ւ՞ւմ համար էք ողբում:

— Մեր փրկիչ Քրիստոսի համար, որ չարչարեց մարդկային ազգի համար, պատասխանել են իւղաբեր կանաչք. և սկսել են պատմել հեթանոս կնոջ թէ ինչպէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս չարչարեց մարդկային ազգի համար և թէ ինչպէս նա իւր արիւնով քաւեց նախահօր մեղքերը:

Հեթանոս կինը լուրջաւ բացականչում է՝ մեծ է Տէրն մեր Յիսուս Քրիստոս և, քարի վերայ նստած, ցաւելով դառնապէս ողբում է իւր մեղքերը: Նորա թափած արտասուքի կաթիլները չիթ չիթ գլորւում են եղել հողի վերայ և ծիւ արձակում գետնի մէջ: Հեթանոս կինն աչքան կոծում և ողբում է, մինչև երկնից ձալն է գալիս՝ թո՛ղ ներւի քեզ քո մեղքերն և քո արտասուքից մի ծաղիկ բուսնի, որ ծանուցանելու է աշխարհին Աստուածորդի Յիսուս Քրիստոսի չարչարանքը: Այդ միջոցին բուրում է

անուշահոտութիւն և հեթանոս կինը տեսնում է որ իւր շուրջը փթթել են գեղեցիկ ծաղիկներ»:

Այդ ծաղիկները պասսիֆլորաներ են՝ չարչարանաց ծաղիկներ, որ ըստ աւանդութեան կրում են իւրեանց մէջ Քրիստոսի չարչարանաց վերև վիշաժ բոլոր գործիքները:

Մի այլ բույս, որ նման է առաքիլին և բուսնում է միայն Արևելքում, նոյնպէս մեծ պատիւ էր վաւելում, որովհետև իւր տերևների վերալեղած բծերով և փշալից պտուղներով փշեցնում էր Փրկչի մարմնով խոցոտած տեղերը:

Գենասարէթից գէպի արևմուտք, Ձիթենեաց լեռը շրջապատող հովտում բուսնում են շատ տեսակ շուշաններ և սօրա նման բոցեր, ուստի դժւար է ասել թէ իսկապէս ո՞ր բույսի մասին է խօսում Փրկիչը ժողովուրդն ուսուցանելու ժամանակ: Հնչակաւոր բուսաբան Սմիսը կարծում է թէ այդ բոցն «մարիլէա»-ն է, որի ոսկեգոյն ծաղիկները «Սողոմոնի հանդերձից» փալլուն են. միւս բուսաբանները հաւանակութիւն են տալիս, որ այդ պէտք է լինի Բիւզանդիոյ շաշան կամ կարմիր ճաշափայտ, որ Գալիլեայի շատ տեղերում բուսնում է դարնան սկզբներում, ապինքն աչն միջոցին, երբ Քրիստոս լերան վերայ խօսեց իւր առակը: Մարտագոյնի բրդաձև ծաղիկները շատ գեղեցիկ են և հեռու տեղից էլ երևում են:

Միջնադարեան կրօնաւորները մեծ խնամքով պահպանում էին հոգեաց շաշան, կարծելով թէ սա աչն ծաղիկն է, որի մասին խօսում էր առակով Քրիստոս լերան վերայ: Իսկ Անգլիայում այդ ծաղիկն ունէր անաւատութեան նշանակութիւն և համարւում էր սրբազան: Սուրբ Լէօնարդի վարուց պատմութեան մէջ, ուր նկարագրւում է վիշապի հետ երեք օր նորա վարած արիւնահեղ պատերազմը, այդ սրբոյ արեան թափւած տեղում բուսել են հովտաց շուշաններ, որ աչքմա էլ կան Ս. Լէօ-

նարդի անտառում: Հովտաց շուշաններ հարաւալին Եւրոպայից բերած են՝ Անգլիա շատ հին ժամանակից տասներկու և տասներեք երորդ դարերում ալք ծաղիկը գործ էր գրւում եկեղեցիներ զարդարելու համար: Սակայն երբ սուրբ Դոմինիկոսը վերջերում հաստատեց եկեղեցիները վարդերով զարդարելու սովորութիւնը, ալն ժամանակ հովտաց շուշաններով զարդարում էին միմիայն Սուրբ Կոստի մատուռները գարնան ամիսներում:

Վարդի ծագման մասին կալ կրօնաւորների հնարած հետեւեալ առատակը. պատմում են իբր թէ բեթղէնեացի մի քրիստոնեալ կին՝ դատապարտւած լինելով խարոկի վերաջ ալրւելու, աղաչել է Աստուծոն պահպանել իրան: Այդ իսկ միջոցին ալրոդ փաշտերը փոխարկւում են կարմիր վարդերի, իսկ չալրոդ փաշտերը՝ սպիտակ վարդերի: Այսպէս ծագումն է առել վարդենին կարմիր և սպիտակ վարդերով՝ ի չիշտակ և ի խրատ մարդոց, թէ կարմիր վարդերը մարտիրոսաց ծաղիկներ են, իսկ սպիտակները՝ Ս. Կոստի նշանակ:

Կալ մի աւանդութիւն որ իբր Մահամէղն է ստեղծել վարդերը: Սակայն Յոյների աւանդութեամբ կարմիր վարդն իւր գոյնն ու անուշահոտութիւնն առել է Աստղիկ դիցուհուց: Մի օր դիցուհին՝ սպիտակ ծաղիկներ քաղելիս, վիրաւորել է իւր մատն և մի կաթիլ արիւնով ալք ծաղիկը կարմիր գոյնի է ներկւում. իսկ դիցուհու որդի Կուպիդոնը՝ հաւանելով վարդը, դրօշմում է նորա վերայ մի համբույր, որից ալք ծաղիկը ստացել է իւր ալքմեան անուշ հոտը:

Յոյները չիլիմներ զարդարելու համար գործ էին անում Լաւանդա, Կովայնոա, Կեհուր և Բրեյնի: Վարդը նոյնպէս գործ էր դնում միայն թաղման հանդեսներին: Ճենացիք տնկում են վարդի թփեր գերեզմանների վերայ: Վերին Գերմանիայում զագաղի վերայ լաճախակի դնում են վալրի Դեյուի-ներ, մինչդեռ Փրանսիացիք հանգստա-

բաններում շիշաֆին են գործ անում: Զւիցերիայում և Իտալիայում ալս նպատակի համար ծառայում է Կոստա-ճալիք որ Իտալիայի շատ տեղերում մինչև անգամ կոչւում է «նջեցելոց ծաղիկ»:

Մաղկազարդին գործ դրւած Կոստա Կոստիլի Փրկչի Երուսաղէմ մոնեղիս ժողովրդի նորան զիմաւորելու չիշտակն են: Կաթողիկ եկեղեցիներում ուռենու փոխարէն գործ են անում չիմշատի ոստեր: Ուռենի գործ անելու սովորութեան մասին զանազան բացատրութիւն են տալիս. մի քանիսն ասում են որ ուռենին հին ժամանակում գործ էր դրւում իբր վախի նշանակ ննջեցելոց վերայ, ինչպէս երևում է ալք Վիրգիլիոսի երկասիրութեան մէջ, ուր լաւէրժահարսներն և հովիւները նկարագրւած են ուռենու տակ նստած՝ իւրեանց սիրեցեալների մահն ողբալիս: Միւսները կարծում են որ Մաղկազարդին ընծիւղացած է լինում միայն ուռենին, ուստի ալք տօնին սովորութիւն է դարձել արմաւենու ոստերի փոխարէն գործ անել ալք ծառի ոստերը:

Մշտադաւար բուսերից՝ Կոստիլ, Բոստիլ ու Կոստիլ գործ են անում: Անգլիայում ծնեղեան տօնին՝ Հին ժամանակներում մղամուռնը խորհրդաւոր բուս էր համարւում: Նախնի գալլիացիք առանձին նշանակութիւն էին տալիս դորան, Նոյնպէս և հայերի գերմանացիք խորհրդաւոր պատմութիւն էին անում նորա մասին: Այսպէս արեգակի և ամրան բարի աստուած Բալդուրը լաղթում է մութ և չար Լոքին՝ գիշերի և ձմրան թագաւորին: Լոքը երբեք է ալսուհետի Բալդուրին չը վիրաւորել ալնպիսի մի վէնքով որ չինած լինի ամառը կանաչող երկրի վերայ կամ ջրի մէջ բուսած բուսից: Այսպէս երդւելով չար Լոքին միևնույն ժամանակ մտածում է եղել վրէժխնդիր լինելու: Մղամուռնը կանաչում է ձմեռն և չէ բուսնում ոչ երկրի վերայ և ոչ ջրի մէջ: Լոքին չինում

է նորանից վտանգաւոր մի նետ և վիրաւորում է արե-
ղակը, ալդ օրւայ և ամբան փալլուն աստուծուն ալնքան
ձանր, որ Բաղդուրն երկար ժամանակ մահճի մէջ է մնում
և միայն աստուածների հօր Վաղանի բժշկարար կարո-
ղութեամբ նա կրկին առողջութիւն է գտնում:

Սրբազան էր համարում այն խաչին, որի վերայ
բուսնում էր մղամունճը: Քրմապետները բնակում էին
կաղնեաց անտառներում. կաղնու ոստերն ու տերեւները
գործ էին անում բոլոր կրօնական հանդէսների ժամա-
նակ. զոհաբերութիւնը կատարում էին ալդ տեսակ կաղ-
նիների տակ: Նոյն իսկ մղամունճն, որ բուսնում էր կաղ-
նու վերայ, մեծ պատիւ էր վայելում և համարում էր
երկնային պարգև: Այդ բոլոր կտրում էին ծառից մեծ
հանդէսով տարւալ առաջին լուսնի վեցերորդ օրը: Ծառի
տակ կանգնացնում էին երկու նոր լծի վարժեցրած
սպիտակ արջաւ: Զոհաբերութիւն կատարող զրուիդը
(քրմապետ) սպիտակ հանդերձ հագած բարձրանում էր
ծառի վերայ և կտրում էր մղամունճը ոսկեայ մանգաղով:
Ծառի տակ սփռած սպիտակ կտաւի վերայ ընկնում էր
ալդ բուսն, որ չկտոյ բաժանում էին ներկայ եղողներին:
Արջաւները զոհւում էին, աղօթելով որ մղամունճը բա-
րեւաճող աղղեցութիւն ունենայ: Մղամունճից ըմպելիք
էին պատրաստում, որ համարում էր ամենալոյս տեսակ
թոնին համար դեղթափ և հիւանդութիւնների բուժող:
Այս ըմպելիքը գործ էին անում նոյնպէս պողաբերու-
թեան համար: Մղամունճի ոտը համարում էր ամենալոյս
տեսակ հիւանդութիւնների դարման: Նիթէ մարմինը ցա-
ւած տեղը մղամունճի ոտ քսէին, մարդս ապաքինւում
էր: Մինչև այժմ Անդլիալում իւրաքանչիւր տարի սե-
նակիի առաստաղից կախում են մղամունճի ոտեր և
գործ անում զանազան խաղերի համար: Նոյնպէս Գեր-
մանիայի մի քանի տեղերում մնացել է հին սովորութիւն

չունվարի 9-ին, այսինքն այն օրն, երբ արեգակը աստուծու
իշխանութիւնը սկսում է աւելանալ, մարդիկ քսում են
իրանց մարմինն մղամունճի կանաչ ոտերը: Բայց այժմ
դորա փոխարէն մեծ մասամբ գործ են անում մախրի
(եղևնու) ոտը:

Նոյն իսկ կաղնին ըստ աւանդութեան հիւանդու-
թիւնների բուժող է համարում: Օրինակ՝ Ղրիմում, Թա-
թարների Բէլք-Սէլւան կոչւած գիւղի մի պարտեզի մէջ
կա մի մեծ կաղնի ծառ, որի մասին հետեւեալ աւան-
դութիւնն են պատմում: «Եղել են իբր երկու եղբարք,
որոնցից աւագը լինում է գիտնական և հնախոյզ, իսկ
կրտսերը՝ լոկ մի բարի տղամարդ: Այս կրտսեր եղբարը
ապրում է եղել իւր աշխատանքով և երբէք չէ եղել դի-
մում իւր հարուստ եղբոր օգնութեան: Երբ սա հասակն
առնում է և նշանւում և հարսանեաց օրը որոշւած է լի
նում, լանկարծ նորա նշանածը հիւանդանում է: Բժիշկի-
ները հիւանդից ձեռք են վերցնում. փեսայի միակ լոյսն
է մնում խնդրել աւագ եղբորից նորա հրաշագործ Թա-
լիսմանը: Աւագ եղբարը մերժում է տալ նորան Թա-
լիսմանը, որովհետև նորա սրտով չէր ալդ ամուսնու-
թիւնը: Կրտսեր եղբարը փորձում է լափշտակել նորա-
նից այն մի կտոր փալտը, որից կախւած է եղել
իւր նշանածի կեանքն ու իւր անպապան: Փորձը չաջող-
ւում է. փեսացուն Թալիսմանը ձեռքին արդէն չտապում
է դէպի իւր նշանածը, բայց ճանապարհի կիսին եղբոր
մարդիկը հասնում են նորան: Սրն անձրևալին է լինում,
կրտսեր եղբարը՝ դալրացած վալը է ձգում և ոտնակոխ
անում այն կտոր փալտը: Սորանից բուսնում է մեծ կաղ-
նու ծառ, որի կեղևով ցալժմ բժշկւում են թաթարներն և
դէպի ալդ հրաշագործ կաղնին ունեցած հաւատն ազա-
տում է նոցա շատ ցաւերից: Կան այնպիսի հիւանդու-

թիւներ, որ թաթարների աւանդութեամբ բժշկուում են միայն նոյն ծառի տակ քուն մտնելով:

Ամենախորհրդաւոր բոլսերից մէկը պէտք է համարել լօշտակ բոլսը: Հրէաներն ալ լօշտի արմատը հանելու համար՝ կտրում էին բուն արմատից ճիւղերն և դուրս էին քաշում արմատը գետնից: Այդ միջոցին արմատը սաստիկ ձալն էր արձակում, որով կարող էր սպանել ամեն մէկին: Այս պատճառով արմատը հանելիս խորհուրդ էր տրուում պինդ խցել ականջներն և արմատից կապել մի շուն, իսկ չրջապատողները փախչելով կանչում էին շանը և նորանից առնում արմատն. ալ միջոցին շունն իսկոյն սատկում էր: Սոյն աւանդութիւնը կալ նաև Արարատեան դաւառում:

«Լօշտակ անունով բոլս մը կալ Մշոյ աշխարհին մէջ, ասում է Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցը ¹⁾, լաճախ կը գտնուի առաւելապէս Ս. Կարապետի վանքին բոլորը, մացառներու մէջ կարճակէ իւր սատերը, որոնք կը բարձրանան և կը պատատւին փալտերուն և անոնց թանձրախիտ տերևներուն, կը խառնեն իրանց լալն տերևները, որոնք ձևով նման են խաղողի որթի տերևի, իրանց ցօղունը նման է որթի բարունակի և խաղողի ողկուղի ալ շատ նման ողկուղիներ ճութ-ճութ կը կախէ, միայն թէ անոր պտուղները մանրիկ են քանզի խաղողին: Այն ալ բոլսն է, որով արմատը մարդանման ըլլալ կը համարուին և թէ մինչև անգամ անոնց մէջ արուն և էգն ալ լալտի են: Թէ՛ ալս արմատը հանելու համար լատուկ ազօթ մը ունին ²⁾ և թէ՛ երբ կը կտրեն իւր միւս կտորներէն, խաղաղին ձալնով կը ճչալ՝ ալս ուր կամ հաւը

¹⁾ «Գրոց-բոց» Կ. Պոլս, 1874 թ., երես 32—33.

²⁾ Այս ազօթքն էլ տպւած է նոյն հեղինակի «Մանանայ» խորագրութեամբ գրքի մէջ, երես 327:

անոր ձալնին զոհ լինի, եթէ ալ դ հնար չը լինի, արմատ հանող մարդը պիտի մնունի: Ամենավերջին աստիճան դառնութիւն ունի ալ արմատը և իգ. կերպ ցաւոց ու ախտից դարման է ³⁾: Բաւական փափագանօք և թանգ գնով կը գնեն զալն Նոր-Նախիջևանէն և Հին-Խրիմէն և ալ կողմերէն Մշոյ Ս. Կարապետ եկող ուխտաւորներ:

Մի նամակի մէջ, որ գրւած է 1675 թ. լէպցիգեցի մի բնիկ քաղաքացուց իւր եղբորը Ռիգա, կան մի քանի նկատողութիւններ որ ցոյց են տալիս թէ ալ Ժամանակ որպիսի թերահաւատութեամբ էին վերաբերում մարդիկ դէպի ալ մարդանման արմատը: Նամակի մէջ գրւած է՝ թէ՛ քո տնային գործերը շատ ողբալի վիճակի մէջ են, քո որդիքը, խոզերն, ոչխարներն և ձիաները մեռել սատակել են, գինիդ, գարեջուրդ նկուղի մէջ թթւել են և թէ դու կնոջդ հետ ապրում ես անհաշտ: Այս պատճառով առաջարկում է եղբորը հետեւեալ դարմանն ալ փորձանքի դէմ, որ չառաջ է եկել չար մարդկանցից՝ «Յթէ գտնես լօշտակ և ներս տանես տունդ, բոլորը կարգի կը գալ»: Այդ փորձանքից եղբորն ազատելու համար, ինքը գնել է վաթսուն և չորս տալէրով և ուղարկել է նորա համար լօշտակն և սորա գործածելու համար հետեւալ պատուէրը. «Լօշտակը տուն տարած ժամանակ երեք օր թող հանգիստ և մի մօտենար նորան: Յետոյ գի-

³⁾ Մէք. Ռէստեյի բժշկականութեան մէջ (Վէնայի 1822 թ. Հ. 2, երես 343) տպւած է՝ «ի փոշույ սորա (արմատ) կտրելու զեղ ազդողական ընդդէմ խելագարութեան, լուսնախտ (լուսնի ջրգողութեան, երկարատե ախտից և հիւանդութեանց) դէմ: Թուլացուցիչ, ուժգին լուծողական, միզարեւ և գրգռիչ: Թեւումը Այլև ստատակէ զձէն որովայնի, լուծանէ քրտնա մարմնոյ և մեանգամայն սթափէ դթմրեալ մարմնոյ: Նոյնպէս օգտուէտ է ընդդէմ շնչաղբելութեան, այտուցից և պակասութեան ամսական պարտուց կանանց»:

ալն տաք ջրի մէջ և այդ ջրով սրսկիր տաւարդ, տան չէմքն և ամենալն ինչ և եթէ լօշտակի հետ կարգին վարեալ, բոլորը լաւ կը լինի: Տարին չորս անգամ լողացրու լօշտակը և ամեն անգամ լողացնելուց չետոջ փաթաթիր ալն կերպասի մէջ և պահիր ամենաթանգագին իրերի հետ և ալ ևս քեզ ոչինչ հարկաւոր չի լինի: Մանաւանդ բարեբեր է ալն ջուրն օրի մէջ լողացրել ևս լօշտակը: Դատաստան երթալիս լօշտակը գիր աջ ձեռքիդ անթի տակ և չաջողութիւն կունենաս թէ արդարութեան և թէ անիրաւութեան մէջ»:

Լօշտակի զօրութեան և հրաշագործ չտակութիւնների մասին շատ զրուցներ կան մինչև այժմ Ֆրանսիայում և Գերմանիայում:

Ֆրանսիական մի երկասիրութեան մէջ, որ գրւած է 1718 թ., պատմում է թէ մի գիւղացի ունեցել է լօշտակի արմատ մարդու կերպարանքով: Այս արմատը նա ձեռք է բերել մի գնչուից: Գիւղացին թաղել է արմատը լուսնի և Աստղիկի բաղդաւոր միաւորութեան միջոցին, գարնան, երկուշաբթի օրն և ալն տեղում թափել է կաթն օրի մէջ խեղդել է երեք դաշտալին մուկ: Մի ամսից չետոջ արմատն առաջւանից աւելի նմանել է մարդու: Յետոյ լօշտակն աղաւնիձ բոյսի հետ զրել է հնոց և ապա փաթաթելով լօշտակը պատանքի մէջ, ալուպէս պահպանելիս է եղել: Այդպիսով գիւղացին միշտ չաջողութիւն է ունենում թէ որսի ժամանակ և թէ իւր միւս գործերում:

Լօշտակի մասին Եւրոպայի շատ երկիրներում մնացել են շատ աւանդութիւններ: Նորա արմատի կտորներն իբրև թալիսման պահպանում են սիրող դէմ, կամ իբրև միջոց տնային ոգիների դէմ, կամ իբրև պահապան չար մարդկանց և զևերի դէմ, նաև իբրև դարման հիւանդութիւնների դէմ:

Զինաստանում Էէյ-ի մասին հետեւալ աւանդութիւնը կա: «Դատմալի մօտ 519 թւականին՝ հնդկաց թագաւորի որդին գնացել է Զինաստան բուդդայականութիւնը քարոզելու համար, Երիտասարդ քարոզիչը վարելիս է եղել ճգնաւորի կեանք՝ կերակրելով միալն դաշտալին ծաղիկներով: Նա վճռել է երբէք չը քնել: Երկու տարի նա վարել է այս տեսակ կեանք, բայց մի անգամ նա չոքնած ժամանակ՝ մոռանալով իւր խոստումը, խորը քուն է մտել: Փնից զարթնելով նա շատ վշտացել է որ դրժել է իւր խոստումն և իրան պատժելու համար խուզել է լօնքերն և անիծելով ձգել է գետին: Քարոզիչը զարմացմամբ նկատել է որ լօնքերը մի ժամից չետոջ փոխարկւել են մինչև ալդ օրն իրան անձանօթ բոյսի տերեւների: ձաշակելով այդ տերեւները, դառել է նոցա համեղ ու կաղ-դուրիչ և առաջարկել է հաւատացեալներին գործածել այդ նոր բոյսը, որ ալդ օրից թէ՛ անունով դարձել է Զինաստանի մէջ գործածական խմիչք:

Ալուպէս ամենալն ժամանակ ծաղիկները, բոյսերը կամ սոցա մի քանի մասերը միշտ ունեցել են որ և է կապ մարդկային բանական կեանքի հետ: Ծաղիկների անուանների, գոյնի, հոտի և տեսքի վերաջ չօրինւած են երգեր և կամ նոցա վերագրւած է գերբնական զօրութիւն:

Հալերիս մէջ էլ, իբրև դարաւոր կեանք վալելած և ոգիկան դարգացման ամենալն ատտիճաններն անցած մի ազգի մէջ, Նոլնպէս կան աւանդութիւններ կամ վէպեր բուսական թագաւորութեան ներկայացուցիչների վերաբերեալ: Ինչպէս տեսանք, հեթանոսական ժամանակներից սկսած բոյսերը սակաւ դեր չեն խաղացել հայերի ոգիկան կեանքի մէջ:

Երբ մեր մէջ տարածեց քրիստոնէութիւնը, ալն ժամանակից ի հարկէ ծառերի և բոյսերի մեծարանաց նշանակութիւնն էլ պէտք է որ փոխէր աւետարանական լոյսի ազդեցութեան տակ: Բարտի և սորա նման ծառեր, եթէ հեթանոսական ժամանակներում մարդիկ համարում էին չար ոգիների կամ դևերի ապաստանարան, քրիստոնէութեան տարածելու միջոցին ալ ծառերը պէտք է որ փոխէին իրանց դերը, դառնալով սրբազան վայրեր սրբերին ծառալելու համար:

Մարդկային ազգի այս թուլութիւնն և հեթանոսական սովորութիւնների պահպանելու սաստիկ ձգտումը լաւ ըմբռնելով՝ մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը ջանացել է հաստատել և արմատացնել Հայաստանի մէջ աւետարանական ճշմարիտ լոյսը՝ կործանած մեհեանների տեղ Աստուծու տաճարներ կանգնեցնելով և հեթանոսական տօնախմբութիւնները սրբոց տօների փոխարկելով: Այսպէս Նաւասարդի տօնը նւիրեց նա Ս. Կարապետին և Աթանազիէս եպիսկոպոս վկային, որոց նշխարքը բերելով Կեսարիայից և Սեբաստիայից, Տարոնոյ (Մուշ) երկրում չինեց Ս. Կարապետի տաճարը: Նոյնպէս Անահատը մեհեանի տեղը կանգնեցրեց Ս. Աստուածածնայ եկեղեցին և այլն:

Այս իսկ պատճառով Հայաստանի այն տեղերում, ուր հնագոյն ժամանակում կար հեթանոսական որ և է սրբավայր, ալնտեղ ժողովուրդը չինեց իւր աղօթարանը: «Տեսնաս ձորի մը մէջ, ասում է Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց, բոլ մի ծառ և աղբիւր մը. աւերակ մը հոն: Գերեզման մը այս բլուրի վերայ. խաչքար մը ալն ինչ տեղ: Ամեն տեղերն ալ ուխտի կերթալ Մշոյ ժողովուրդ, առանց գիտնալու թէ ինչ կալ ալնտեղ: Բայց մտածողին խորհիլ կուտան, թէ ալն տեղերը՝ կամ մեծ

չիշատակ մ'է կատարած, կամ մեծ նահատակ մ'է ինկած, կամ հրաշք մ'է տեսնւած»¹⁾: Ահա ալ տեղերում կան սրբազան ծառեր կամ թփեր, մեծ մասամբ չէն և կիսաւէր եկեղեցիների մօտ, որ հեթանոսական ժամանակում գուցէ ունէին իրանց որոշ նշանակութիւնը, իսկ ալժամ ժողովուրդը՝ քրիստոնէութեան ազդեցութեան տակ, համարում է սրբի բնակարան կամ օթեան և մեծարում է ուխտագնացութեամբ: Այդ ծառերի և թփերի վերայ կախւած կան շորի կտորներ, բժժանքներ և ալ իրեր, որ նւիրել են ուխտաւորներն իրանց ցաւից բժշկելու մտքով: Տէլլոր գիւնականի վկայութեամբ՝ շատ ազգեր, մինչև անգամ եւրոպացիք, աւանդութիւն ունին որ վարելի է աղատել հիւանդութիւնից՝ տալով ալն ուրիշ անձի կամ առարկայի: Սորա համար հարկաւոր է տալ ուրիշին կամ կախել ծառից հիւանդին պատկանող կամ նորա վերայ եղած որ և է իր. Այս է իսկ պատճառը որ սրբազան վայրերում գտնող ծառերն ու թփերը զարդարւած են հիւանդի հագուստից վերցրած կտորներով և ալ իրերով:

Հայաստանում ալ սրբազան ծառերից և թփերից շատ կան, որոնցից աչքի են ընկնում գլխաւորապէս տիպիւն, կաղնին, տանձին, նարբանդը, մասրին և այլն: Սոքա բուռնում են սրբոց ուխտատեղիներում կամ ալնպիտի վայրերում, ուր ալժամ հնութեան հետք անգամ չը կալ: Անտարակոյս կար ժամանակ որ ալ տեղերում գտնւում էր հեթանոսական մի սրբավայր, ուր քնտազալ ժամանակում եկեղեցի են կանգնեցրել. իսկ եթէ չեն չինել աղօթատեղիք՝ ժողովուրդն աւանդութեամբ շարունակել է լաճախել ալն տեղերն և արտապալտել իւր մեծա-

¹⁾ Գրոց-բրոց. Երես 12:

բանքը: Այդ ուխտատեղերում սրբազան ծառերի սուերի տակ ուխտաւորները զովանում են, մանաւանդ որ ուխտադնացութիւնն էլ կատարւում է ամառ ժամանակ: Ուստի և ժողովուրդի մէջ աւանդութիւն է մնացել որ այն սուրբն էլ շոգ ժամանակ նոյն ծառի տակն է զովացել:

Այդ սրբավայրերում գտնւած ծառերն առհասարակ անձեռնմխելի են վանքում կամ եկեղեցում չը ծառայող օտարների համար: Եւ եթէ մին վստահանալ նորանից մի ոստ կտրել՝ սուրբը նորան կը պատժէ, կտրած ոստը նորա ձեռքին կը կպչի: Եւ այդ պատուհասից ազատել նա կարող է միայն վերադարձնելով տարածը հանդերձ զոհաբերութեամբ: Գետնի վերայ ընկած ծառի չորացած ճիւղերն անգամ ոչ ոք չէ վստահանում տանել և միայն թուլ են տալիս գործածելու զոհի համար:

Ի հարկէ պէտք է հիշածել որ այդ ծառերը պաշտելի են ոչ իբրև ծառեր, այլ իբրև օթեան ժողովրդի որ և է աստուածութեան, կամ իբրև սեպհականութիւն աստուածների: Սորա ապացոյցն այն է, որ ուր ժողովուրդը քրիստոնէութեան ժամանակ չը կարողացաւ իւր հեթանոսական կուռքի փոխարէն Աստուծու տաճար կանգնեցնել, այնտեղ նա ծառի վերայ մեխել է կամ նորա խուռչի մէջ պահել է մի խաչ կամ սրբոց պատկեր:

Քրիստոնէութեան տարածելու միջոցին շատ տեսակ ծառեր կորցրին իրանց հեթանոսական աւանդութիւնները, տեղի տալով այն վէպերին և աւանդութիւններին, որոց իմաստը վերցրած է Աւետարանից: Օրինակի համար՝ Հին Նախիջևանի ժողովրդի մէջ քչաբի ծառի մասին հետեւեալ աւանդութիւնը կայ: Մի անգամ Յովհաննէս Մկրտիչ պատահել է փողոցում Ս. Կոյս Մարիամին: Ս. Աստուածածինը տեղ չը գտնելով իւր կնքահայր Յովհաննէսից՝ թագնւելու, մտնում է փշատի

ծառի տակ, որ կռացնելով իւր ճիւղերը ծածկում է նորան Մկրտչի աչքից: Այդ պատճառով, ասում է աւանդութիւնը, փշատի ծառի երբեմն վեր նայող ճիւղերը մինչև այս օրս դէպի վայր են ուղղւած:

Այս աւանդութիւնն անշուշտ հիմնւում է այն սովորութեան վերայ, որ գոյութիւն ունի շատ հալաքնակ տեղերի մէջ, և որը պահանջում է սանամարից կնքահօրը տեսնելիս թագ կենալ:

Ղազարու և Լօրւալ գաւառների ժողովրդի բերնում պտտում է մի աւանդութիւն ֆէնի ծառի մասին: Այդ ծառը սուրբ է համարւում նորա համար, որ հրէաներից հալածւած ժամանակ Քրիստոս փախչելով մտնում է գետնի անտառն և պահւում նորա խիտ ճիւղերի տակ, և այդպիսով հրէաներից ազատւելով, Քրիստոս անտառից դուրս է գալիս, օրհնում գետնի ծառն ասելով՝ օրհնեալ լինիս գետնի և միշտ կանաչ ու անուշ հոտը քեզանից անպակաս լինի: Այս պատճառով, ասում է աւանդութիւնը, գետնի միշտ կանաչ է և նորա փայտից անուշ հոտ է բուրում:

Եփեսոսի մասին պատմում են թէ իբր երբ Քրիստոս քարոզելով շրջում էր դաշտերում, ամեն խոտ երկրպագութիւն էր տալիս նորան. իսկ ծխախոտի տերեւները նրան տեսնելիս ամենևին չէին շարժւում: Այդ պատճառով Յիսուս անիծում է այդ բոլորն ասելով՝ «պախտեան քո տերեւներն ալւուին» և այն օրից մարդիկ ծխելով ալւում են ծխախոտը:

Գեռ մինչև այժմ մեր մէջ Քրիստոսի պաշտօնական երապութեան տօնը կոչւում է հեթանոսական անունով՝ վարդավառ, որ նւիրւած էր Աստղիկ դիցունուն և հնագոյն սովորութեամբ այժմ տօնւում է այն ժամանակից մնացած պարագաներով: Այս տօնի ժամանակ, ինչպէս լապանի է, ծաղիկները մեծ դեր են կատարում և նոցա օգնու-

Թեամբ ժողովուրդը գուշակում է իւր բազղը՝ Ներկայումս ամենալն ծաղիկ անխտիր գործ է դրւում ալդ միջոցին, թէն հին ժամանակում պէտք է կարծել, որ սորա համար նշանակւած էին որոշ ծաղիկները միայն: Սակալն մի քանի տեղերի վերաբերութեամբ կարելի է որոշել որ չալտնի անուշահոտ դեղին Բարձրահալը (Չանդուլումի ծաղիկը) վիճակի ժամանակ առաջին տեղն է բռնում ալ ծաղիկների կարգում: Նոյնպէս Ղաղախու բնակիչների մէջ սովորութիւն կալ ալդ տօնին եղան ճակատը ծաղկափնջով զարդարելու և ալդ ծաղկափունջը գլխաւորապէս կաղմում է հաւաքից: Այսպէս զարդարւած եղներին առաջն առած՝ ժողովուրդը գնում է դէպի սրբի դուռը:

Համբարձման տօնի նախընթաց երեկոյին կէս գիշերից փետոյ ժողովուրդն ընդունում է որ իբր ծաղիկները խօսում են միմեանց հետ, չալտնելով ալդ միջոցին ալն թէ իրանք ինչ ցաւերի և հիւանդութիւնների համար կարող են դեղ դառնալ, կամ թէ չէ գուշակում են ալդ միջոցին մի տեսակ իմանալ նոցա խօսակցութիւնը և գուշակել իրանց բազղը:

Ծաղիկներով հմայութիւնը կար և՛ հին ժամանակում: Թէոփրաստը պատմում է որ նոցա օրով լոյները հմայութիւնը կատարում էին Խաչիւի թերթով: Նոքա վերջնում էին ալդ թերթն և դնում մի ձեռքի բթամատի և ձկոտի վերալ և միւս ձեռքով վրան խփում: Եթէ ալս միջոցին թերթը ճալթում էր՝ նշանակում էր որ հմալած անձնաւորութիւնը սիրում է նորան, եթէ ոչ՝ չէ սիրում: Այս տեսակ հմայութիւն կալ և մեր մէջ. սորա համար վերջնում են «էբէ-էբէ» ծաղիկը և մի մի հատ նորա ծաղիկները պոկելով, ասում են՝ սիրում է, չէ սիրում: Եւս պատճառով էլ ծաղիկը ստացել է իւր ալթմեան անունը: Ս. Գիւլզատեանցի «Հօրուտ-Մօրուտ» ոտանաւորի մէջ ալս ծաղիկի մասին ասւած է՝

Բացւիր ծաղիկ, սեր-սիրիկ,
Բացւիր, քաղի քեզ մատիկ,
Վիճակ ձգի իւր բաղդիկ
Մեր գեղերի խեղճ աղջիկ:

Սոյն տեսակ հմայութիւն կատարում է Ղէօթէի Մարգարիտը «Ֆառուսի» մէջ, երբ նա ծաղիկի թերթերը մէկ մէկ պոկելով «սիրում չէ, սիրում է» կրկնում:

Բազղը գուշակելու համար հաւերի մէջ կան էլի ուրիշ բոլսեր: Մի բաղմածաղիկ բոլսի ճառագալթածն ծաղիկները մի մի հատ պոկելով հմայողն ասում է՝ աղբիւմ—չ'աղբիւմ, և ծաղիկն էլ ստացել է իւր անունը, կոչւելով «աղբիւմ—չ'աղբիւմ»: Նոյնպէս հմայում են Էրեհալ երեք տերն ունեցող բոլսով. եթէ հմայողն ալդ բոլսի վերալ չորս տերն գտնէ, իւր բազղի գուշակութիւնը կատարւած է համարում: Այս բոլսի մասին Վասպուրականի բնակիչներն ուրիշ աւանդութիւն էլ ունին, որ վիշում է Գ. Ե. Սրուանձտեանցը «Մանանալ» գրքի 112 էրեսում: «Երեքնուկ խոտ, որ երեք տերն ունի և որ չաճախ ամեն տեղ կը գտնուի, մուրիկ մուրիկ կը փնտռեն անոնց մէջէն բոլս մը, որ չորս տերն ունենալ իրաւունք և ալնուհետ աղատ կը լինին զալն իրանց վրալ պահողներն ամեն չարէ և կախարդանքէ»:

Ծաղիկները նոյնպէս ունին իրանց վէպը. նոքա առհասարակ ներկայացնում են՝ մէկը քուր, միւսն եղբայր. կամ երկու քուր մէկը մայր, մէկը կնքահայր, միւսը սանամայր. մէկը տէրտէր՝ միւսը տիրուհի, մէկը սիրողը՝ միւսը սիրւած, երկու որը եղբայր. մէկը արնոտ սիրտ՝ միւսը օձի թուր կամ միտած իւսն ջալ. մէկը կիթոց լի կաթն է սալիտակ և անարատ, միւսը թոյն թալիտ իրեղէն վիշալ և ալն¹⁾:

1) «Գրոց-Բրոց». Երես 35.

Առօրինակ ծաղիկի մասին ասում են աւանդաբար,
թէ ով աչս ծաղիկը քաղէ, նորա տան կուժը և միւս
ամանները կը կոտորաւորին:

Հայաստանի լեռնալիւս կողմերում բուսնող վա-
ղուկ բոլոր մասին հետեւեալ աւանդութիւնը կա: Եթէ
որ և է հնարով կարելի լինի, լափշտակելով աչս բոլոր
կրիտից, ձգել դարանակալ մարդու կուրծքում նորա քնած
ժամանակ, իսկոյն և եթ աչք բոլոր կը հանէ մարդու
սրտից նենգաւոր չարութիւնները, եթէ միայն նա իւր
սրտի մէջ չգտնուի է աչք չարութիւնները գործելու: Ասում
են նոյնպէս, որ եթէ աչք բոլոր դնեն որ և է գոյ կը-
կաթէ կողպէքի վերաջ, կողպէքն առանց բանալիքի կը
բացուի:

Կիւսման ի (դարչինի) մասին աւանդութիւնն ասում
է, որ եթէ մէկն աչք բոլոր դնէ քնած մարդու շրթունքի
վերայ և բան հարցնէ, պատասխան կը ստանալ նորանից:

Խաչապուտի ծառը շատ տխուր տեսք ունի և աչք
պատճառով ժողովուրդը տարաբաղդութեան նշան է հա-
մարում աչք ծառը: Աշխատում են աչքունմն աչք ծառը
տանից հեռու տնկել:

Մաշապուտ բուսերից կա մի փոքրիկ բուս, որ մե-
ղանում կոչւում է չոփ և Բաբի: Աչս բուսը ժողովրդի
մէջ պիտոյ աւանդութեամբ խորհրդաւոր է համարւում:
Հիւսիսային Աֆրիկայի և Պաղեստինի չոր հովիտներում,
նոյնպէս Թաւրիսի աւազոտ անապատում աչք բուսը վա-
րենի է: Չնայած փոքրիկ թուի է հինգ կամ վեց յօդաչափ
(դիւլմ) բարձրութեամբ: Ծաղիկի թափելուց լատու բուսը
տերեաթափ է լինում, ոտները չորանում են, դէպի ներս
են ոլորում և ամբողջ բուսը մի գնդաձև բան է դառնում:
Աչք միջոցին բուսն իւր արմատով դիւրութեամբ պոկ-
ւում է գետնից և անապատի միջով գլորւելով, հասնում

է մինչև խոնաւ տեղը: Երբ զիպչում է ջրին, իսկոյն
ուղղւում է, ստանալով իւր նախկին ձևը: Բոլոր խոնա-
ւութիւնից ուղղւելու լատկութիւնն առիթ է տուել այն
աւանդութեան կազմելու, թէ նա փթթում է Փրկչի
ձնեղևան օրն և աչք պատճառով նա կոչւում է Մա-
րիամի վարդ, իսկ Ս. Գրոց մէջ անւանւած է վարդ Երկրպոյի 2):

Աւանդութիւնն ասում է, որ Ս. Մարիամ Աղոյն
երկանց ժամանակ բռնել է աչք բուսն և աղաւթել է
Մանուկ Գրիստոսից: Մեր հասարակ տատմալերը մեծ
փող են ծախսում աչք բուսը Պաղեստինից բերել տա-
լու համար, որովհետև իբրև միջոց գործ են անում ծանր
երկանց ժամանակ: Աչք ժամանակ նորա ձգում են աչք
բուսը ջրի մէջ. բուսը խոնաւութիւնից ուղղւում է և
նորա լուսն տալիս ձնեղևակնին չաջողութեամբ աղաւ-
թելու: Լատու աչք ջրից քիչ քիչ խմեցնում են նորան,
իբրև երկունքը թեթևացնելու միջոց, թէպէտ ինքը բուսը
չունի բժշկարար լատկութիւն:

Հայաստանում կա աղբերաց արիւն կոչւած մի
փոքր վարդաձև, վառվուռն, մոլդ կարմրագոյն ծաղիկ:
Գուսանաց երգերի մէջ նմանեցնելով աչք ծաղիկը սիրե-
լոյն, ասում են՝

Ա՛յ աղբերաց արիւն՝
Որ բուսար մեջ քարերուն,
Աչուիդ ի նարկիդ նման,
Մէկն ի քուն ու մէկ արթնում:

Կալ նոյնպէս համասպարամ կամ համափիւս անուանում
բուս: Սորա ծաղիկները պալծաւ են և պէսպիսապոյն:

2) Եւս իբրև դարմաւենի բարձրացայ յենդադա և իբրև
դաւանկ վարդենայ յերեքով: Սիրաք. Իդ. 18.



Բռնանում է քարոս լերանց ձորերում և մի ուրիշում՝ օդ
երևում է գիշերանց լուսնի լուսով: Աւանդութիւնն է, որ
մեծ զօրութիւն ունի, մինչև անգամ իբր սառնորոտ
սրամտութիւն է պարգևում ¹⁾: Սորա մասին եւս
բիշ աւանդութիւն ես, որ ասում է թէ սորա ծաղիկն
ուտողը կամ իւղի հետ խառնած իւր անդամներն
քողը կը խօսի ամենալն աղգաց լեզու և կը լցւի ամենալն
խմաստութեամբ և գիտութեամբ: Մի ուրիշ տեղում էլ
ասած է՝

Այն Համասփիւռ ծաղիկն որ կալ, ծաղկել ծառով հազա-
րագոյն.

Կոյր աչերուն լոյս կու բերէ, եթէ Տէրն տալ Աղամուր-
դւոյն.

Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան տարւոյն.



Ամեն թիւին զոյն մի ծաղիկ, մարդ կու մալի անուշ հո-
տոյն:

Արքայիկն Սձն է թաղաւոր, ինքն սպիտակ որպէս զձիւն
Համասփիւռին կու հետեր և զօրութիւն կառնու հոտոյն ²⁾

Պէտք է զիշել և ալն, թէ ծաղիկներն ալնքան մեծ
պատիւ են վաղելելիս եղել հալերի մէջ, որ մեր գեղե-
ցիկ սեռը նոցանից մի քանիսի անուններն է կրում:
Շուշան, Նարգիզ, Ռէհան, Մանուշակ, Համասփիւռ,
Անթառամ, Վարդիթեր և ալն թէ հին և թէ նոր ժա-
մանակներում մեր կանանց սովորական անուններն են:

¹⁾ Ծաղիկ Հայրենեաց Հայոց. Ղ. Վ. Ալիշան, Հատոր ա
երես 52.

²⁾ Ծառի-Հոտով. Գրականք ծաղկանց» երես 278.



ԳԻՆՆ է 15 ԿՈՊ.

Վաճառում է Թիֆլիսի հայ գրաՎաճառանոցներում
և «Մուրճ»-ի խմբագրատանը:

ՄՀ հայագիտական գրադարան



MAL007791

